

2549

1750 -  
Jewel - gator - 2  
young - Prince

244  
6-89

| 884

244  
5-89

ԵՐԿՈՒ

## ԳԱՌԵՆՈՒԿՆԵՐՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Դա ուղարկեց Հայոց կայսեր կողմէն, ու կառավագական կայսեր կողմէն :  
Յայ դ. թ. 27.

-----  
معارف عمومیہ نظارت جلیلہ سنگ رخصتیله  
٣٠ محرم ۱۹٢١ تشرین ثانی ۹۹ نومرو ۷۸۹  
مصارف آمریقان مسیوز شرکتی طرفندن تسویہ اولندرق

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1884

50-22126

4 2001

2010

ԳԱՐԴԱ

ՅՈՒՂԵՄՏԻՌԵ-ՌԱՋ

ՀՅՈՒԺՊԱԽՍՅՈՒԹ

Դասը առ առ առ մինչ առ առ առ առ առ առ  
մեջ առ առ առ առ առ առ առ առ  
155 . 4 . 2-8

53032-ահ



Կույտ(Պ) ցը սի կը տրամադրեա պատվի զի՞ն մշակութան  
շահ լի առ մեծ սի սի մաս մաս մաս մաս մաս մաս մաս

ԱՌ ՄԱՆԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՂԸ Այս  
անձ ցը լ ա ն կ ց պ ա մ ա մ ա մ ա մ ա մ ա մ ա մ ա  
մաս  
Սիրելի Տղայք

Այս տետրակիս մէջ պատմուած երկու գաւ  
ռանց դէպքը՝ այլաբանօրէն նկարագրուած է :

Այս երկու փոքր գառինք որոց վրայ պիտի  
կարդաք, կը նշանակեն ճիշդ ձեզ նման փոքրիկ  
տղաներ։ Իսկ բարի չոփիւն որ կը նկարագրուի՝  
է Տէր թէնուս, որ լասած է իրեն համար (Յովհ.,  
ժ. 11), “Ես եմ բարի հոփիւը,” և այսպէս  
կը կոչուի նաև Սուրբ Գրոց ուրիշ մասերուն  
մէջ։ Գոռացող առիւծը զոր պիտի տեսնէք  
հոս՝ է մեծ իշխանն Դիւաց, որ կը կոչուի Սա-  
տանայ (Ը Պետ. Ե. 8.) և որուն ուրիշ շատ ա-  
նուններ արուած են Սուրբ Գրոց մէջ։ Այս երը  
զոր ստէպ յիշուած պիտի գտնենք այս պատ-  
մութեան մէջ, կը նշանակեն չար մարդիկ և  
տղայք, որ շատ կ'աշխատին ընել մանուկներն  
իրենց պէս շար։

Եթէ կ'ուղէք զիտնալ թէ ինչ է այն այ-  
ծերուն վախճանը, կարդացէք Մատթէոսի Ա-

39159-67

1881

Ետարանին մէջ Յիսուսի վկայութիւնը (Մատթ .  
իւ . 32—46) :

Երջանկութիւն գոր վայելեց Անմեղութիւնը  
բարի Հովուին փարախին մէջ՝ օրինակ է ա-  
նոնց երջանկութեանը որ կը լսեն և կը հնա-  
զանդին Յիսուսի խօսքերուն, մինչ պատրան-  
քը և նեղութիւնները որ պատահեցան Տգի-  
տութեան փարախէն ղատուելէն ետքը՝ կը  
ցուցնեն այն մարդոց դառն փորձառութիւնը,  
որ երջանկութիւն կը յուսան գտնել թողլով  
վրիստոսի ծառայութիւնը :

Եթէ այս պատմութեան մէջ պատահիք տեղ  
տեղ դժուարին իմաստներու, և կամ բառե-  
րու զորս չէք դիտեր, հարցուցէք դիտցողնե-  
րուն, որպէս զի հասկնաք պատմութեան ճշդ-  
իմաստը :

Ժամանակ ըստ շաբաթի գործությունների  
ու պատմությունների նշանակած է յուսուցիչ  
մասնաւոր պատմություն:

Համար առաջ պատմությունը մասնաւոր է յուսուցիչ  
ու պատմությունների նշանակած է յուսուցիչ  
մասնաւոր պատմություն:

## ԵՐԿՈՒ ԳԱՌՆՈՒԿՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Չատ տարիներ առաջ երկու գառնուկներ  
կային լերան մը վրայ, որ թողլով իրենց փա-  
րախն ուր ծնած և սնած էին, և, հեռանա-  
լով իրենց խնամուտ մօրմէն որոյ անունն էր  
Անմեղութիւն, ինկած էին կատաղի առիւծու-  
մը ճիրաններուն մէջ։ Առիւծն առնելով զանոնք  
իւր սակած տակ շաղախած էր տղմոյ մէջ, և  
խլելով անոնց փափուկ բուրդը, մահու շափէ  
վիրաւորած էր զնոսա :

Առիւծը պիտի ուտէր զանոնք եթէ չհաս-  
նէր խնամուտ բարի հովիւ մը, որ աղատեց  
զանոնք առիւծուն բերնէն։ Բայց մինչ հովիւն  
այս բարերաբութիւնն ըրաւ անոնց, ինք ըն-  
դունեց կատղած առիւծէն ծանը վէրքէր։  
Յետոյ առաւ այն գառնուկներն իւր թեհերուն  
վրայ մինչ անոր վէրքէրէն վաղելով արիւնն  
կը ներկէր անոնց բուրդերը։ Հովիւը լուաց  
տիղմը որով շաղախուած էին անոնք, և ապա  
տարաւ զանոնք ցորեկուան տաքուն լեռնային  
անծանօթ ճամբէ մը անցունելով, և բերաւ  
ձորի մը մէջ շինուած գեղեցիկ փարախս մը որ

պատաճ էր բարձր որմով։ Զորին քով գետ մը կար որոյ եղերքը կային անուշահոտ ծաղիկներ և պաղատօռ հովանաւոր ծառեր, և փարախին բոլորտիքէն անցնող յորդահոս վտակ մը բոլորովին զատաճ էր գետն ու փարախը իրարմէ։ Փարախին մէջմտնելունեղ գուռ մը միայն կար։

Յայտնի էր թէ հովիւը չէր հոգար իւր վէրքերուն ցաւը, այլ անոր բոլոր հոգն էր հանգիստ և միխթարութիւններ տալ գառնուկներուն։ Ուստի և ջանաց չթողուլ այլոց մաքրել անոնց տղինվ շաղախեալ բուրդերը և բժշկել անոնց վէրքերը, այլ ինք լուաց զանոնք այն վտակին մէջ։ Անոնց վէրքերուն վրայ կակուղ և բուժիչ տերեւններ դնելով, և յարմար կերակրով մնուցանելով առողջացոց և զօրացուց զանոնք։

Յետոյ հանգոյց զանոնք փափուկ կանանչ խոտերուն վրայ ծառերուն տակ, որ անոնց վրայ հովանի ընելով կը պաշտպանէին զանոնք արկեին տաքութենէն, և սկսաւ անոնց հետ խօսիլ այսպէս. “Գառնուկներս, գիտէք որ ես զձեղ այնչափ կը սիրեմ որ արինս ձեղի համար թափեցի, և զձեղ առիւծուն ճիրաններէն աղատելով, այս գեղեցիկ և աղահով փարախը բերի։ Եթէ կը հաճիք հոս կենալ և լսել իմ ձայնիս, հոգ կը տանիմ ձեղ և ինչ բարի բան որ կ'ուզէք՝ կու տամ և կը մնու-

ցանեմ զձեղ։ Զեղ կը խնամեմ, և կ'ըլլամ ձեր բարեխնամ հովիւը։ Ահա այս փարախին մէջ աղէկ արօտ և ջուրի աղբիւրներ կան, թող ասոնք ձեղի ճարակ և ըմպելի ըլլան։ Գառնուկներս, եթէ սիրէք զիս, որ նախ ես զձեղ սիրեցի, և եթէ զիրար սիրէք, յետոյ կ'առնում զձեղ և կը տանիմ աւելի աղնիւ և խոտաւէտ տեղ մը։ Տեսէք սա լերան գըլուխը որ ձեր առջևն է, հոն կը տեսնէք գեղեցիկ քաղաքի մը ծայրը։ Արևն այն տեղոցն ծառերուն վրայ այնպէս կը ծագէ որ ոսկոյ պէս կը փայլին։ Այն ծառերէն անդին արօտ մը կայ, ուր շատ կը սիրեմ շրջիլ. ոչխարներս և գառնուկներս կը նան հան կատարեալ հանգիստ գտնել։ Քիչ ժամանակէն հոն կը տանիմ զձեղ, եթէ լսէք ձայնիս և հնազանդիք ինձ։ Բայց եթէ մերժէք զիս և չճանչաք իրեն ձեր բարի հովիւը և այս փարախէն ելլելով՝ երթաք միւս լերան վրայ արածիք, կը թղում զձեղ, և կ'իյնաք նորէն առիւծուն ձեռքը որմէ աղատեցի զձեղ, քանզի առիւծն արդէն կը փնտռէ զձեղ որ ուտէ։”

Հովիւը ասոնք ըսելէն ետքը հեռացաւ, բայց դարձեալ ամէն օր կու գար զանոնք դարմանել, և իւր սիրոցն նշաններն այլ և կերպով կը ցուցնէր անոնց։

Այս երկու գառանց միոյն անունն էր խա-

զաղութիւն և միւսինը՝ Տգիտութիւն։ Ասոնք  
շատ աղէկ օրեր անցուցին այն զուարձալի  
դաւթին մէջ։ Ունէին առատ և պատուական  
կերակուր և հովանաւոր տեղ մը , զիբար՝ և  
մանաւանդ այն բարի Հովիւը կը սիրէին , և  
շատ կ'ուրախանային մինչ նա իրենց քովն էր։  
Թէպէտ փոթորիկը պակաս չէր այն լերանց  
մէջ և երեմն անձրև և կարկուտ կը տեղար  
այն փոքրիկ փարախին վրայ , սակայն այն տեղ-  
ւոյն ծառերը մեծ ըլլալով և գառնուկնե-  
րուն վրայ հովանի ընելով , ընդհանրապէս կը  
պահէին զանոնք եղանակին խառնակութենէն։

Օր մը հովիւն ըստ սովորութեան եկաւ  
տեսնել զանոնք։ Խաղաղութիւնը յառաջ վա-  
զեց դիմաւորել զնա , և ինչպէս սովոր էր՝ կը  
խայտար քովերը։ Խոկ Տգիտութիւնը յամբ  
յամբ կ'երթար անոր ետեւէն , և իւր բարի  
բարեկամին նայելով քիչ մը տհաճութիւն կը  
ցուցընէր։ Բայց հովուին գէմքին վրայ խոժո-  
ռութիւն կամ խստութիւն չկար , որ գառ-  
նուկը վախնար անոր մօտենալու։

Հովուին մեկնելն ետքը Խաղաղութիւնն ը-  
ստ իւր եղբօրը . “Ի՞նչ եղաւ քեզի , եղբայր ,  
եթէ հիւանդ ես կամ բանի մը պէտք ունիս ,  
ինչո՞ւ համար նեղութիւններդ չես իմացուներ  
մեր բարի տէրոջը , քանզի նա ամէն բան ա-  
ռատ կու առյ մեզ” . “Այն բանը զոր ես կ'ու-

զեմ չիտար ,” պատասխանեց Տգիտութիւնը .  
“Վասն զի այն բանը յայտնապէս արդելեց  
ինձ ։ Ես կ'ուղեմ թողուլ այս փարախիր և եր-  
թալ տեսնել այն զուարձալի բլուրները որ  
մեր աջ և ձախ կողմն են ։ Գիտե՞ս որչափ  
զուարձալի է անոնց վրայ բնակիլ , հեռուանց  
գիտելն անդամ մեծ հաճոյք է ։ Կը տեսնեմ  
հոն տեսակ տեսակ ծաղիկներ որ բուսած են  
առատութեամբ այն բլուրներուն գլուխը , և  
գոյնզգոյն թռչուններ որ կ'երդեն ծառերուն  
վրայ ։ Կը տեսնեմ նաև փափուկ ծաղկաւէտ  
խոտեր , կը տեսնեմ ոչխարներ և այծեր որ  
կ'արածին խոտերուն վրայ , և գառնուկներ  
որ անոնց մօտ կը խայտան ։ Ո՞՛ , եղբայր , չեմ  
կրնար երջանիկ ըլլալ , ցորչափ այս փարախին  
մէջ փակուած եմ և արդելուած է ինձ վա-  
յեկը բերկութիւնը զոր այն ոչխարք կը վա-  
յեկն ։”

Խաղաղութիւնը ջանաց յորդորել իւր եղ-  
բայրը և ուղել անոր խորհուրդները . “Այն  
արդելեալ բանները յիշելով ,” ըստ , “մեծ  
մեղք կը գործես . այդպիսի խորհուրդներ միտ-  
քէդ նետելու ես ։” Բայց տեսնելով որ Տգի-  
տութիւնը չէր անսար անոր խօսքին և խրա-  
տին , միտքը գրաւ իւր և իւր եղբօրը մէջտեղ  
եղած խօսակցութիւնը պատմել հովուին , որ  
սովոր էր անոնց այցելութեան գալ , երբ աշ-

ռաւօտուն ցողը ծաղիկներուն և խոտերուն վրայ կ'իջնէր :

Խաղաղութիւնը իւր տէրոջը իմացուց եղբօրը փափաքները , և բարի հովիւր կոչելով Տգիտութիւնը անպատմելի գթութեամբ խօսեցաւ անոր հետ այսպէս .

“Գառնուկս , ինչո՞ւ համար դժգոհ ես տեղէդ , ուր զքեղ գնելու համար քիչ ծախք չըրի : Միթէ արդելեցի՞ ձենէ ինչ որ կ'ընէր զձեղ խաղաղ , ապահով և երջանիկ : Եթէ պատուիրեցի ձեղ այդ մօտակայ բլուրներուն վրայ չարածուիլ , պատճառը աս էր որ հոն ուրիշ բան պիտի չլինայիք գտնել եթէ ոչ դառն և մնասակար խոտեր , և պիտի իյնայիք կատաղի անդութ թշնամիներու ձեռք : Գառնուկներս , դոհ եղէք որ իմ փարախս կը բնակիք . ականջ դրէք իմ ձայնիս , կեցէք իմ քովս և ես կը պահեմ զձեղ կատարեալ խաղաղութեան մէջ : Բայց եթէ կ'ուղէք երթալ այն բլուրներուն վրայ և հոն արածիլ , գիտցէք որ իմ թեթև լուծս պիտի փոխուի նեղութեան , տրտմութեան և տառապանաց , և դորովալի խնամքս՝ պատառող առիւծու կատաղութեան :”

Հովիւր գառնուկներուն Մնաք բարեաւ ըսելէն առաջ՝ խրատեց զանոնք իրենց աչուը ները չդարձնել դէպ այն վտանգաւոր բլուր-

ները : Բայց Տգիտութիւնը չէր ուզեր անսալ հուսին աղղարար ձայնին , և ոչ եղբօրը յորդորներէն կը շարժէր : Բոլոր օրը կը կենար ձորին գլուխները , կը նայէր արդելեալ լերան ծաղիկներուն , մտիկ կ'ընէր այն տեղույն ծառերուն վրայ հանգչող երգեցիկ թաշուններուն ձայնը , այնպէս որ հոն արածուող ոչխարները և այծերը որ կ'ուղէին բարի հովուին ոչխարները դուրս հանել իրենց տէրոջը փարախէն՝ ուրախացան , երբ իմացան թէ Տգիտութիւնը ձանձրացած էր իւր տէրոջը աղնիւ կառավարութենէն : Ակսան մօտ գալ , և կը յորդորէին զնա փախչիլ փարախէն : “Մենք շատերս ,” ըսին , “ձեր ձորին մէջ կը կենամինք , բայց չկըցանք մեր վրայ դրուած անտանելի պատուէրներուն դիմանալ , վասն որոյ փախանք , և հիմա կը վայելենք հոս կատարեալ աղատութիւն :”

Տգիտութիւնն ասոնց խօսքին դիւրաւ հաւատաց , վասն զի կը ցանկար այսպէս ընել : Ուստի առտու մը՝ մինչ իւր եղբայրը , խաղաղութիւնը , դեռ կը քնանար , ելաւ և ցաթկեց փարախը պատող ջուրերուն վրայէն միւս կողմը : Հոն նոր ընկերներն ուրախութեամբ ընդունեցան զնա , և խոստացան տանել զնա դէպի պատուական արօտը ուր պիտի արածուէր և սնանէր հանապաղ , նաև ցուցնել այն

ծաղկեայ անկողինները՝ որոց վրայ բոլոր գիշերը պիտի քնանար քաղցր քնով։ Տգիտութիւնը հաճեցաւ երթալ անոնց եւ տեէն։ Բայց երբ կէս օր եղաւ, հեռուէն այնպէս զուարձալի երկցող կանանչ խոտեւրոն դեռ չհասած, արեգական սաստիկ տաշքը կը տիրէր լեռներուն վրայ։ Տգիտութիւնը տաքէն և անօթութենէն նեղուած, և լեռներէն վեր ելլելով յողնած էր, բայց մեծ բերկութիւն գտնել կը յուսար այն պատուական խոտերը ճարակելով։ Այժ մը ըսաւ անոր. “Հիմա ուրախ եղիր, փափաքդ լեցուր այս պատուական կերակրով, և խմէ ոտիցդ տակէն վաղող ջուրէն։”

Գառնուէն սկսաւ անյագաբար ճարակիլ խոտերուն մէջ որ այնպէս աղէկ երկցած էին նմա, բայց չգտաւ զոր ինչ գանել կը ցանկար, քանզի երբ խոտը բերանը կ'առնուր, շատ դառն կը գտնէր զայն, և թէպէտ շատ կերաւ այն խոտէն, ամեննեին չյագեցաւ. և պատճառը սա էր որ այն լեռներուն հողն անհիւթ ըլլալով։ Էր տար խոտերուն սննդաբար զօրութիւն։ Տգիտութիւնը գնաց ջուրին քով որոյ յստակութիւնը փափաքելի կ'երկցունէր զայն. սակայն թէպէտ Տգիտութիւնն խմեց այս ջուրէն անյագաբար, ճարաւն ամեննեին չանցաւ, նա մանաւանդ տելցաւ։ Դարձեալ

խմեց, բայց աւելի ծարաւեցաւ։ Նաև սկսաւ զգալ չերմութիւն երակներուն մէջ, քանզի այն տեղւոյն մօտ ուր ջուրը կը բխէր՝ բուսածէին վասակար խոտեր, որ իրենց թունաւոր տերենները և ծաղիկները տարածելով ջուրին վրայ, տուած էին անոր այնպիսի յատկութիւն մը որ կու տար խմողներուն պապակ և տենդ։ Ջուրին աղղեցութիւնն այնպէս սաստիկ եղաւ Տգիտութեան վրայ, և տուաւ նմա մեծ անհանգստութիւն, որոյ նմանը երբէք կը ած չէր նա։ Ուստի աղաչեց ոչխարներուն և այծերուն իրեն նոր տեղ մը ցուցնել։

“Ետեւէս եկու,” ըսաւ այծերէն մին, “տանիմ զքեղ անտառը, որ սա մօտակայ լերան վրայ է. արդէն կը աեսնես դեղեցիկ թոշունները որ կ'երգեն անտառին ծառերուն մէջ։”

Տգիտութիւնը վեր նայեցաւ, բայց չէր կը նար պայծառ տեսնել ինչպէս առաջ, վասն զի այս լեռներուն օդը շատ տարբեր էր այն օդէն զոր կը ծծէր իւր առաջին երջանիկ ձորին մէջ։ Այս լեռներուն օդն այնպէս ծանր կու գար անոր որ չէր զգար այն զօրութիւնը և առողջութիւնը զոր զգալ սովոր էր։ Այն օդը նաև այնպէս թանձր և միզապատ էր, որ չէր թողուր իրերը աեսնել այնպէս ինչպէս էին։ Զիարդ և իցէ Տգիտութիւնը գնաց այծին ետեւէն, մինչև հասաւ այն թոշուններուն

անտառը , որոց գեղջցկութեանը վրայ շատ զարմացած էր :

“Գիշերը կը մօտենայ ,” ըստ այծը . “Քանզի արել բլուրներուն ետևէն մարը մտնելու վրայ է : Աղէ՛ , տանիմ զքեղ տեղ մը ուր պառկիս ծաղկեայ անկողնայ վրայ և հանգչիս , քանդի այս օր շատ քալեցիր և հարկաւ յոդնած ես : Հոն թուշուններուն քաղցրածայն երգերովը կը քնանաս . և ես վաղիւ կու դամ և կը տանիմ զքեղ ուրիշ զուարճալի տեղեր :

Տգիտութիւնը շնորհակալ եղաւ իւր նոր բարեկամին , և երբ կարմիր , կապոյտ և գեղին ծաղիկներով զարդարուած անկողնոյն վրայ պառկեցաւ , կ'ըսէր մտքէն . “Ահա այսուհետև երջանիկ պիտի ըլլամ :” Քիչ մը ատեն այն ծաղիկներուն հոտովը բերկրեցաւ , ականջ դնելով թուշուններուն երգին և զարմանալով անսոց գեղցցիկ փետուրներուն վրայ : Բայց շուտով հասկցաւ որ թուշուններն ամենեին չէին փոխեր իրենց եղանակը : Քիչ մը ժամանակ ևս մտիկ ըրաւ զանոնք , ապա սկսաւ ձանձրանալ անոնց ձայներէն , և վերջապէս բոլորովին թմրեցաւ մնաց :

Տգիտութիւնը գլուխը վար դնելով կ'ուղէր քնանալ , բայց ծաղիկներուն հոտը որ քիչ մը առաջանուշ էր՝ այնպէս սաստկացաւ դիշերուան օդէն որ անտանելի եղաւ : Ուստի

Տգիտութիւնը նստաւ , և կը բաղձար ուրիշ անդմը գտնել , բայց արկը շատոնյ մարը մըտած էր , և գիշերն ամպոտ էր . աստղմը անդամ չէր տեսնուեր երկինքը : Խորին մթութեան մէջ կը վախնար դուրս ելլել թէ դուցէ վտանգի մը հանդիպէր : Վերջապէս համարձակեցաւ ծառի մը տակ երթալ և հոն չոր տերեւներ ժողվելով պառկեցաւ անոնց վրայ : Բայց հովը բլուրներուն վրայէն փշերով ծառերը կ'երերցունէր , ինք սկսաւ միլ , բուերն անտառներուն մէջ կը ճէին և չղջիկներն իւրենց թեւերը կը զարնէին անոր գլխուն :

Ժամեր անցան և Տգիտութիւնը չկրցաւ հանդիսաւ գտնել . միտքն աղետալի խորհուրդներով լցաւ . անոր փափուկ անդամները կը դուզային ցուրտէն : Գիշերուան թուշուններուն ձայնէն կը վախնար , բայց վերջապէս քնացաւ , և քունին մէջ սոսկալի երազօք կը խոռովիքը : Մերթ կը թուէր նմա տեսնել այն տեղը ուր անմեղ եղբայրը իւր կակուղ խոտերէ շինուած անկողնոյն վրայ , խիտ առ խիտ աղբն կուած ծառերուն տակ գիշերուան հովէն պահպանուած , կը քնանար . և մերթ կը թուէր նմա թէ բարի հովիսը եկած էր , և խիտ ձայնով կը կանչէր զնա և կը յանդիմանէր : Նորէն ահ ու գողի մէջ կ'արթննար , որպէս թէ կը հալածուէր առկւծէն և մօտ էր իյնալ

անոր բերանը : Հետևեալ առտուն նոր ընկեր  
ներն անոր այցելութեան եկան : Տղիտու-  
թիւնն սկսաւ գանգատիլ անոնց իւր ձախոր-  
դութեան վրայ , հասկցուց թէ ինչ նեղու-  
թեամբ անցուց զիշերը , և խնդրեց որ եթէ  
հնար էր ետ դառնար իւր եղբօր քով :

Այծերէն մին ըստա . “Յայտնի է թէ դուն  
տակաւին աշխարհը չես զիտեր . դեռ տղայ  
ես : Մենք չբերինք զքեղ հոս որ այսպէս  
սրտաբեկ ըլլաս , այլ որպէս զի աղատ ըլլաս  
այն բեռերէն և նեղութիւններէն դորս տկարք  
և երկշուրք միայն կը կրեն . բայց կը տեսնեմ  
որ դուն փափաք չունիս վայելել այն աղնիւ  
աղատութիւնը որուն այնչափ կը ցանկայիր քիչ  
մը առաջ : ”

Տղիտութիւնը պատասխան տուաւ այծին .  
“Սխալ է կարծիք , և շուտով պիտի իմանաս  
թէ ես զիտեմ թէ ինչպէս պիտի վայելեմ ա-  
զատութիւնս : Բայց դուք խարեցիք զիս , վասն  
զի ձեր բերկութիւններուն փորձն առնլով  
տեսայ որ անոնք դառնութիւն են” :


“Ճշմարիտ է թէ ,” ըստա այծը , “դուն ե-  
րէկ գժուարութեանց հանդիպեցար , բայց  
միշտ այնպէս պիտի չըլլայ : Քեզ այսօր պիտի  
տանիմ մարդագետիններ , ուր կրնաս ըստ  
հաճոյս արածիլպատուական արօններու վրայ : ”

Տղիտութիւնը հաւատաց այծին խօսքին , և

թէպէտ անոր խոստումը սուտ էր և գառնուկը  
նորէն գանգատեցաւ իւր գժբախտութեան  
համար , սակայն ընկերներն ամէն օր նոր մի-  
ջոցներ կը գտնէին քաջալերել զնա :

Նոր արօտ վնատուելու համար կը տանէին զնա  
բլուրներու և ապառաժներու վրայ որ աւելի  
գժուարին էին քան այն լեռ , որուն վրայէն  
անցուցած էր զնա հովիւր , երբ աղատելով  
տիւծուն բերնէն կը տանէր խաղաղ փարա-  
խը : Այս ապառաժուտ բլուրներուն մէջ անոր  
փափուկ ոտուըները քարերէն խոցուեցան , և  
ձեան պէս ճերմակ բուրդը փուշերով լցաւ և  
տղմով շաղախեալ աղտեղացաւ : Թող այս ա-  
մէն գժուարութիւնները որոյց համար արժա-  
նաւոր հատուցում չեղաւ անոր , ոչխարները և  
այծերը որ առաջ անոր հետ այնչափ մարդա-  
սիրութեամբ վարուած էին , հիմա գաղրած  
էին անոր բարեկամութիւն ընելէ : Ոչ միայն  
կը թողուին զնա որ իւր հոգերն ինք տանէր ,  
այլ և սկսան անոր հետ կռուիլ , ինչպէս սո-  
վոր էին կռուիլ իրարու հետ . մանաւանդ երբ  
շատ գեղեցիկ արօտի մը կը հանդիպէին , իւ-  
րաքանչիւր կը ջանար իրեն յատկացունել զայն ,  
և մէկ գի կը վանէր իւր ընկերները :

Բայց կը նեզէր զնա այն տեղույն գաղան-  
ներուն գոչիւնը զար կը լսէր շատ անդամ էիս  
գիշերուն այն խորունկ անտառին ապառա-



ժուտ և ծառախիտ քարայրներէն։ Շատ անգամ անքուն կ'անցունէր գիշերն առիւծուն վախէն, ամէն վայրկեան կը կարծէր թէ զինը քը պատառելու և ուտելու կու դար դաղանը զմեռուան երկայն գիշերներ և ամառուան երկայն օրեր անցած էին յորմէ հետէ Ցգիտութիւնն իւր զուարձալի փարախը թաղած էր ։ Իրիկուն մը ուշ ատեն բոլորովին յոդնած և սաստիկ ծարաւէ պապակած ինկաւ գետինը խոտերուն վրայ իւր թշուառ վիճակը ողբալ ։ “Աւա՛ղ,” կ’ըսէր սրտառուչ, «ի՞նչպէս կը փափէի ելլել այն երջանիկ ձորէն ուր կը հանդշէի բարի հովտին իննամոց ներքւ։ Ի՞նչ պատուական արօաններու վրայ կ’արածէր և ի՞նչ պատուական ջրով կը զրվացունէր զիս կենադանի աղբիւրներէն։ Ի՞նչպէս կը տանէր զիս զով տեղեր, և կը տարածէր վրաս բազուկները պաշտպանել զիս արեգական ճառագայթներէն և ջերմութենէն։ Բա՛րէ, սիրելի ընկերս, խաղաղութիւն, սորված էի քեզի հետ հանդշէլ փափուկ խոտին վրայ, և առաւտուն կանուխ ելլել քեզի հետ դիմաւորել մեր սիրելի Ցէրը։ Աւա՛ղ, ինչո՞ւ համար թողի զքեզ։ Այս լեռներն ի՞նչ տուին ինձ փոխանակ այն բերկութեանց զորս կորուսի ։ Հոս ինձ արուած բերկութիւններն ուրիշ արդիւնք չունեցան բայց թշուառութիւն և տառ

ռապանք։ Ո՞ւր է այն աղատութիւնը որուն կը սպասէի ։ Հիմա ես հոս ահի և անձկութեան մէջ գերի եմ, այնպիսի բաներու կը ցանկամ որ երբէք չեն յագեցուներ զիս ։ Մինչ հնազանդ գառնուկ էի հովուխ որ զիս սիրեց և իւր արիւնն ինծի համար թափեց, կատարեալ աղատութիւն կը վայելէի ։ Նա սորվեցուց ինձ ցանկալ բարի բաներու միայն, և ամէն բարի բան տուաւ ինձ։”

Մինչ Ցգիտութիւնն այսպէս կ’ողբար, յանկարծ կտրեց ձայնը, Ուսաի բոլորսիքը նայելով, տեսաւ վիրաւորուած ոչխար մը որ կու դար դէպ ի նա մեծ դժուարութեամբ, և համանելով այն տեղն ուր կը կենար գառնուկ գետինը փոռւեցաւ և կ’երևէր թէ մահուան տագնապի մէջ էր։

Այս ոչխարը մարած ձայնով ըսաւ Ցգիտութեան, “Եղբայր, ինչո՞ւ համար անհոգութեամբ կը կենաս հոս . չե՞ս գիտեր որ առիւծը հիմա լեռան գլուխն է ։ Ել և բոլոր զօրութեամբդ վազէ, եթէ առիւծուն բերանն էինալէ կը վախնաս, ինչպէս որ ես ինկայ անոր ճանկը։”

“Ո՞ւր փախչիմ,” հարցուց գառնուկը դողալով։

“Միայն տեղ մը կայ,” ըսաւ ոչխարը, “ուր կլնաս աղատ ըլլալ առիւծէն . այն ոչխար-

ներուն փարախը՝ որ մնալ այնպէս ձանձրալի թուեցաւ քեզ։ Թէպէտ դուն առանց դժուարութեան կրցար ելլել անկէ, սակայն ասկէ հոն անցնիլ այնպէս դժուարին է որ մենէ քիչ չերն յոյս առին առիւծէն աղատելու համար այն ճամբորդութիւնն ընել։”

“Ուրիշ ո՞ւր կրնամ երթալ,” հարցոց դառնուկն և աւելի դողալով։

“Ո՞ւր որ երթաս, մի և նոյն է,” պատասխանեց ոչխարը. “վասն զի ցորչափ դուն այս լեռներուն վրայ կը կենաս, չես կրնար երկար ատեն աղատ մնալ առիւծէն։” Այն միջոցին տեսնուեցաւ ոչխարաց հօտ մը որ լեռնէն վար կը վազէին այնպիսի շտապաւ որ յայտնի էր թէ կը հալածուէին։

Բայց Տգիտութիւնը չկրցաւ տեսնել թէ իւր թշնամին անոնց ետևէն էր թէ ոչ, վասն զի արդէն երեկոյ եղած էր։ Անոր վիշտն այնպէս մեծ էր որ ողորմ ձայնով կը գոչէր, փ՛նչ ընեմ որ առիւծուն ճիրաններէն աղատիմ։”

“Քա՞րէ, թշուա՛ռ գառնուկ,” պատասխանեց վիրաւորեալ ոչխարը գրեթէ շնչառպառ։

“Երբեմն աշխատեցայ համոզել զքեզ, և դուրս բերել այն գեղեցիկ տեղէն, ուր խաղաղ և ապահով էր, սակայն հիմա, եթէ հնար էր, կը բաղձայի օգնել քեզ գտնել ճամբայ մը վերստին հոն դառնալու։”

“Երանի՛ թէ, փոխանակ յորդորելու զքեզ դուրս ելլել այն փարախին, ես ինդրէի հոն ընդունուիլ: Բայց, աւա՞զ, անարդ եցի ձեր Տէրը, և առիւծուն զօրութիւնն առ ոչինչ համարեցայ. իմ հպարտութիւնս կործանեց դիս:” “Փարախն ուստի ելար,” շարունակեց իւր խօսքը, “արևելեան կողմը կ'իյնայ:” Վեր նայէ, տեսս սա լուսաւոր աստղն յարևելս. բաց աչուըներդ, նայէ հոն, և վազէ փրկութեանդ համար:” Ոչխարն այս խօսքն ըսելով, փչեց ոզին: Գառնուկին սիրաը լցաւ երախտագիտութեամբ անոր այս վերջին բարերարութեան համար, և առանց ըոպէ մը անցունելու հետեւեցաւ խրատին, և իսկոյն ամենայն զօրութեամբ վազեց դէպ այն ձորը: Գրեթէ յոյս չունէր ապահով հոն համնելու, բայց և այնպէս բոլոր գիշերը վազեց: Կը լսէր իւր ետին ուրիշ ոչխարներ որ զարհուրած կը բառաչէին, և առիւծը որ հեռուէն կը մննչէր: Ինք աչքը տնկած էր արևելեան լուսաւոր աստղին, մինչև որ աներեսիթ եղաւ աստղը, և առոտուան լցուը սկսաւ ծաղել: Այնպէս աշրագ կը վազէր Տգիտութիւնը որ՝ միւս ոչխարները շատ հեռուն մնացին: Եւ շատերը կ'երթային այն շիտակ ճամբուն հակառակ կողմը զոր մեռնող ոչխարը ցուցուցած էր: Երբ առաւօտեան լցուը սփռեցաւ և արեգակը կը

բարձրանար, Տգիտութիւնը շատ ուրախ եղաւ, վասն զի հասած էր տեղ մը ուստի փարախը կը տեսնուէր: Բայց այնպէս յոդնած էր ճամբուն դժուարութիւններէն, որ չկրցաւ յառաջ երթալ: Ուստի բոլորովին յոդնած ինկաւ պառկեցաւ խոտին վրայ: Սկսաւ զննել փարախին դուրսի կողմը: Կը յուսար թէ պիտի կրնար հոն երթալ այնպէս դիւրաւ, ինչպէս առաջ ելած էր անկէ: Թէպէտ դժուարութեան հանդիպած չէր, երբ առաջին անդամ՝ հոն զնաց, դիտէր սակայն թէ նորէն հոն ընդունուիլ անհնար էր առանց անցնելու նեղ դռնէն, զորոյ բանալին կը պահէր հովիւր:

Ուստի Տգիտութիւնը նոր դժուարութեան մէջ էր. կը վախնար թէ դուցէ բարի հովիւն առջի չնորհքը ցուցնէր անոր, քանդի շատ բարկացուցած էր զնա Տգիտութիւնը: Բայց սկսաւ միմիթարուիլ, յիշելով թէ հովիւն առսէր նորա իւր արիւնը թափած էր և կը սիրէր զնա՝ մինչև խակ նա ճամբէն մոլորած էր՝ թողլով փարախը և գաւթէն դուրս ելլելով ուր մնալ պարտական էր:

Մինչ Տգիտութիւնն այս բաներուն վրայ կը խորհէր, տեսաւ որ փարախին դուռը բաց, և հովիւր դուրս ելած էր, և իւր ընկերը, խաղաղութիւնը, գրկած կը տանէր: Ի՞նչպէս շարժեցաւ Տգիտութեան սիրաը, երբ տեսաւ իւր

աղնիւ բարեկամը և երջանիկ եղբայրը: Զանաց ելլել կանգնիլ, և վազել անոնց առջև, բայց դարձեալ վախցաւ, տեսաւ որ չունէր զօրութիւն շարժելու: Այսպէս գրեթէ յուսահատ ինկաւ երեսի վրայ: Բայց աշուները տնկած էր դէպի բարի հովիւն որ սկսած էր վեր ելլել լեռնէն, ուր էր այն զուարճալի խոտաւէտ տեղը զոր իւր երջանիկ ժամանակը տէրը շատ անգամ հեռուէն ցուցուցած էր, և հոն պիտի տանէր զնա, եթէ նա սիրէր տէրը և անսար անոր ձայնին: Այս խոտաւէտ տեղը կը մննուէր ոսկիէ դուռնէ մը, որ արեգական պէս կը փայլէր: Երբ հովիւն այն լեռան ծայրը մօտեցաւ, բացուեցաւ ոսկեղին դուռը, և խաղաղութիւնը մտաւ ներս: Երբ դուռը բացուեցաւ, շատ քաղցր երդերու ձայներ լսուեցան: Հովիւները սպարութիւն չունին իրենց ոչխարներն այս աստիճան զուարժացունել:

Այն վայրկենին ուրիշ սոսկալի ձայն մը լսեց Տգիտութիւնը, և ահիւ դարձունելով գլուխը, տեսաւ իւր ահեղ թշնամին, առիւծը, որ այն լեռան գլուխը կեցած էր, և որոյ ահազին գոչիւնը կը թնդացունէր ապառաժները: Առիւծն սկսաւ վաղելով բլրէն վար իջնել, և կու գար դէպի ի հոն ուր կեցած էր Տգիտութիւնը: Ճիշդ այն միջոցին երկեցաւ նաև հո-

վեւը որ բլրայն միւս կողմէն կը մօտենար։ Տղիւ  
տութեան թուեցաւ սա խօսքը լսել. «Մի՛  
վախնար, գառնուկ, ես կարող եմ փրկել ա-  
մէնքը որ ինձի կու դան։» Տղիտութեան սիրաը  
յուսով լցաւ, և մեծապէս քաջալերուելով  
ելաւ կանգնեցաւ։ Քանի մը քայլ միայն մնա-  
ցած էր առիւծուն որ համնէր Տղիտութեան,  
մինչ Տղիտութիւնը նետուելով հովուին ոտքը,  
անոր վրայ տնկեց իւր ցածուն և ապաշխա-  
րող աշուբները։

Թէ այնուհետև ինչ պատահեցաւ Տղիտու-  
թեան, չեմ զիտեր, միայն զիտեմ որ բարի  
հովիւը միշտ կը զթայ և կը փրկէ այն գառ-  
նուկները որ, զիտնալով թէ բարկացուցած  
են զնա, թողութեան և փրկութեան համար  
կը դիմեն անոր։ Ուստի կրնամ ըսել թէ հո-  
վիւն անտարակոյս պիտի աղատէ Տղիտութիւնն  
առիւծուն ձեռքէն, և պիտի սորվեցունէ անոր  
հաւատարիմ ոչխար ըլլալ իւր հօտին մէջ։  
Սա ևս կրնամ ըսել թէ այս երջանիկ գառ-  
նուկը որ գարձաւ՝ այսուհետև պիտի զիտնայ  
թէ իւր հովուին փարախին մէջ միայն կայ  
ճշմարիտ հանգիստ, և թէ անոր պատուէր-  
ները պահելով միայն կրնայ ապրիլ յաւիտեան։



JH

2475